ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

Դասախոսի հետ

ք.Երևան «____» _____ 2023 թ.

Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջն՝ (այսուհետ Գործատուն) ի դեմս տնօրեն **Պարույր Արմենի Սանթրոսյանի** , որը գործում է Գործատուի կանոնադրության հիման վրա մի կողմից, և _____ _____գրանցված _____ _____

անձնագիր թիվ _____, տրված _____ թ. (այսուհետ՝ Աշխատող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Գործատուն Աշխատողին տրամադրում է աշխատանք, որի նկարագրությունը բերված է սույն պայմանագրում և պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար, իսկ Աշխատողը պարտավորվում է կատարել Գործատուի հանձնարարած աշխատանքը սույն պայմանագրով սահմանված պայմաններով՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահական կանոնները: Աշխատողը նշանակվում է **դասախոսի** պաշտոնում և ենթարկվում է **ամբիոնի վարիչին, ուսումնական մասի քարտուղարին, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին, տնօրենին :**

Աշխատանքների կատարման վայրն է **Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջը՝ գործող Թբիլիսյան խճ. 3/1 հասցեում:**

Սույն պայմանագրով Աշխատողին հանձնարարվող աշխատանքը ներառում է հետևյալը՝

1.1.Իրականացնել սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ապահովել կրթական ծրագրերի կատարումը, կրթական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:

1.2.Վարել դասախոսություններ, գործնական և լաբորատոր պարապմունքներ. քոլեջի համապատասխան կայքի մոդուլներ բաժնում տեղադրել իր կողմից դասավանդվող մոդուլների ուսումնառության նյութերը, նպաստել ուսումնառության նյութերի ձևավորման և ստեղծման աշխատանքներին, ներդնել կրթության բովանդակության յուրացումն ապահովող նոր տեխնոլոգիաներ, մեթոդներ և հնարներ, ստեղծելով ուսուցման համար բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր: Հաղորդակից լինել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին :

1.3.Ճիշտ գնահատել սովորողների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները.Նպաստել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակել հայրենասիրություն՝ ձևավորելով ուսանողի մոտ պատշաճ վարքագիծ և վարվելակերպ.

1.4.Կարողանալ սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն , ստեղծագործական ունակություններ, քննադատական վերլուծություն, հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները, հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը: Հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ: Համագործակցել սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում:

1.5.Համագործակցել գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

16.Մասնակցել հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին

1.7.Մասնագիտական առարկաներ, մոդուլներ դասավանդողների պարագայում մշտական կապի մեջ լինել ոլորտի սոցիալական գործընկերների, գործատուների հետ, տնտեսության նորորարությունները ուսումնառության գործընթացում ներդնելու համար:

1.8. Կատարել պաշտոնական հրահանգներով կամ տնօրենի հրամանով և կարգադրություններով իր վրա դրված պարտականությունները, ենթարկվել իր անմիջական ղեկավարի (ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի) պահանջներին:

Աշխատողի համար սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է

հիմնական, համատեղությամբ :

1.9Աշխատանքը սկսել «___» _____ 202 թ.-ից:

1.10.Պայմանագրի գործողության ժամկետը_____:

1.11Աշխատողի համար _____ փորձաշրջան _____ ամիս ժամկետով:
սահմանվում է, չի սահմանվում

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Աշխատողը պարտավորվում է՝ բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած իր աշխատանքային պարտականությունները:

2.2 Պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

2.3 Կատարել աշխատանքի սահմանված նորմերը:

2.4 Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

2.5 Բարեխղճորեն վերաբերվել Գործատուի և աշխատողների գույքին, ինչպես նաև մարդկանց կյանքին ու առողջությանը. Գույքի պաշտպանությանը սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին:

2.6 Կատարել պաշտոնական հրահանգներով պարտականությունները կամ տնօրենի հրամաններով և կարգադրություններով իր վրա դրված պարտականությունները, ենթարկվել իր անմիջական ղեկավարի օրինաչափ պահանջներին:

2.7 Աշխատանքային օրվա ընթացքում աշխատաժամանակն օգտագործել իր աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման նպատակով և չկատարել իր աշխատանքային պարտականություններից շեղվող՝ Գործատուի, ղեկավար անձանց կողմից իրեն չհանձնարարված այլ աշխատանք:

2.8 Իր աշխատանքը կատարել անձամբ:

2.9Իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

2.10 Պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

2.1 Աշխատողն իրավունք ունի՝

2.1.1 Մասնակցել հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին

2.1.2 Ծանոթանալ կազմակերպության ղեկավարության իր գործունեությանն առնչվող որոշումների , նախագծերի հետ:

2.1.3 Ստանալ վարձատրություն սույն պայմանագրով նշված ժամկետում և չափով:

2.1.4 Պահանջել գործատուից ապահովել օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը:

2.2 Գործատուն պարտավորվում է՝

2.2.1 Գործատուն պարտավոր է աշխատողի արդյունավետ աշխատանքի համար ստեղծել անվտանգ ու արդյունավետ պայմաններ, կահավորելով աշխատանքի վայրը ժամանակակից նյութատեխնիկական միջոցներով՝ անհրաժեշտության դեպքում ժամանակակից տեխնիկայով, ժամանակին աշխատողին տրամադրել անհրաժեշտ նյութեր, որպեսզի աշխատողը կարողանա պատշաճ կատարել իրեն հանձնարարված աշխատանքը:

2.2.2Վճարել աշխատավարձը սույն պայմանագրով նշված ժամկետում և չափով:

2.2.3 Սահմանված կարգով աշխատողին տրամադրել վճարվող և չվճարվող արձակուրդ:

2.2.4 Աշխատանքի ընդունվելու ժամանակ, ինչպես նաև աշխատելու ընթացքում, աշխատողին ծանոթացնել գործատուի ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին:

2.2.5 Աշխատողի անձնական տվյալները մշակելիս պահպանել ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված պահանջները:

2.3 **Գործատուն իրավունք ունի՝**

2.3. 1 Ցանկացած պահի ստուգել աշխատողին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը և աշխատողի կողմից իր պարտականությունները ոչ պատշաճ որակով կատարելու դեպքում վերջինիս ենթարկել կարգապահական պատասխանատվության: Մեկ տարվա ընթացքում երկու անգամ միևնույն աշխատակցին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքում աշխատակցին ազատել աշխատանքից:

2.3.2 Արտադրական ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման դեպքում, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված այլ դեպքերում, գործատուն իրավունք ունի առաջարկել կնքելու փոխված պայմաններով աշխատանքային պայմանագիր: Փոխված պայմաններում աշխատանքը կատարելու աշխատողի անհամաձայնության դեպքում Գործատուն իրավունք ունի Աշխատողին ազատել աշխատանքից ՀՀ աշխատանքային օրենսդրության 113-րդ հոդվածի համապատասխան՝ պահպանելով աշխատանքային պայմանագրի լուծման սահմանված կարգը:

2.3.3 Աշխատողից պահանջելու կատարել աշխատանքային պայմանագրով չնախատեսված աշխատանքներ , ներգրավել արտաժամյա աշխատանքների՝ միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքով և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՆԳԻՍՏԸ, ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

3.1 Սույն պայմանագրով աշխատանքային օրվա սկիզբը հաշվարկվում է ըստ դասացուցակի:

3.2 Աշխատողի հանգստի և սնվելու ընդմիջման ժամը սահմանվում է ըստ դասացուցակի:

3.3 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքային շաբաթվա ընդհանուր աշխատաժամանակի տևողությունը չի կարող գերազանցել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված աշխատաժամանակը:

3.4 Աշխատողին տրամադրվում է ամենամյա **35** աշխատանքային օր տևողությամբ երկարացված արձակուրդ, աշխատավարձի պահպանմամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով:

3 .5 Սույնով կողմերը համաձայնվում են, որ աշխատողին ամենամյա արձակուրդը տրամադրվում է Գործատուի կողմից հաստատված ամենամյա արձակուրդների տրամադրման հերթականությամբ կամ աշխատողի դիմումի համաձայն:

3.6 Ստորագրելով սույն պայմանագիրը Աշխատողը տալիս է իր համաձայնությունը ծայրահեղ անհրաժեշտության դեպքում արձակուրդից հետ կանչվելու վերաբերյալ:

3.7 Աշխատողի ցանկությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով, որոնցից մեկը պետք է կազմի առնվազն 10 աշխատանքային օր:

3.8 Աշխատողի պահանջով նրան տրամադրվում է չվճարվող արձակուրդ միայն ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և ժամկետներով:

3.9 Աշխատողին կարող է տրամադրվել կողմերի համաձայնությամբ որոշված ոչ ավելի, քան 60 օր տևողությամբ ժամկետով չվճարվող արձակուրդ:

4.ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

4.1 Աշխատողի տարեկան ծանրաբեռնվածությունը կազմում է՝ _____ դասաժամ, աշխատավարձը՝ համաձայն տարիֆիկացիայի, որը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը (մեկ դասաժամի արժեքը 2023թ-ի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1500 դրամ):

4.2Եթե գերծատուի մեղքով աշխատավարձի վճարումը կատարվում է սահմանված ժամկետների խախտումով, ապա գործատուն յուր. օրվա համար աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0.15 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան վճարման ենթակա գումարի չափը:

4.3 Գործատուի կողմից աշխատավարձը վճարվում է Աշխատողին ՀՀ արժույթով անկանխիկ՝ փոխանցելով Աշխատողի կողմից ներկայացված հաշվեհամարին:

4.4 Աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների առկայության դեպքում Աշխատողին տրվում է հավելումներ, որոնց չափը սահմանվում է Գործատուի կողմից, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

4.5 Հավելումների, պարգևավճարների ու փոխանցումների չափերը և վճարման կարգը սահմանվում է Գործատուի կողմից, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

4.6Ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսվելուց երեք օր առաջ:

4.7 Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում Գործատուն Աշխատողի հետ վերջնահաշվարկը կատարում է դրա դադարման օրը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կողմերի միջև վեճերի առաջացման դեպքում այն ենթակա է կարգավորման Գործատուի և Աշխատողի միջև անմիջական բանակցությունների միջոցով՝ տաս օրվա ժամկետում:

5.2 Կողմերի միջև վեճը սույն պայմանագրի 5.1կետում նշված ժամկետում չկարգավորելու դեպքում այն ենթակա է լուծման դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

6.1 Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ Աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի: Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժան մասը:

6.2 Սույն պայմանագիրը լուծվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում:

6.3 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից

7 ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից

7.2 Սույն պայմանագիրը ստորագրելիս Աշխատողը ծանոթացել է աշխատանքային պայմաններին, Գործատուի ներքին կարգապահական կանոններին:

7.3 Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջ

ՀՎՀՀ 01008611

Տնօրեն՝	Աշխատող՝
Պարույր Արմենի Սանթրոսյան	----------
Անուն,Ազգանուն,Հայրանուն	Անուն,Ազգանուն,Հայրանուն
Թբիլիսյան խճ.3/1 28-57-82	----------
Հասցե, հեռախոսահամար	Հասցե, հեռախոսահամար
_____	_____
Ստորագրություն , կ.տ	Ստորագրություն